Հավելված N 495
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թվականի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործարար միջավայրի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.21-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է էկոնոմիկայի նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Կազմակերպում է գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակման և դիտանցման հետ կապված աշխատանքների իրականացումը և համակարգում դրա հետ կապված միջոցառումները.
2. Կազմակերպում է գործարար միջավայրի խոչընդոտների բացահայտման հետ կապված աշխատանքներ՝ կազմակերպությունների ստեղծմանը և զարգացմանը նպաստող գործարար միջավայրի ձևավորման ուղղությամբ.
3. Կազմակերպում է հետադարձ կապ գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ծանուցումների տրամադրման աշխատանքները,
4. Կազմակերպում է գործարար և ներդրումային միջավայրին առնչվող խնդիրների «Թեժ գծի» հետ կապված աշխատանքները,
5. Կազմակերպում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացման հետ կապված աշխատանքները,
6. կազմակերպում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության օրենսդրական և վարչարարական ընթացակարգերի հետ կապված աշխատանքներ,

7. կազմակերպում է ներդրումների ներգրավման, ներդրումների և ներդրողների պաշտպանության քաղաքականության մշակումը և օրենսդրական դաշտը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ,

8. կազմակերպում է ներդրումային խոչընդոտների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված աշխատանքները,

9. կազմակերպում է օտարերկրյա ներդրումներին առնչվող միջազգային համաձայնագրերի մշակման աշխատանքները,

10. կազմակերպում է կորպորատիվ կառավարման իրավական դաշտի և կանոնների մշակման աշխատանքները,

11. կազմակերպում է ծառայությունների առևտրի քաղաքականության մշակումը, համակարգում է ծառայությունների շուկաների ազատականացման և ծառայությունների միասնական շուկայի ձևավորման աշխատանքները,

12. կազմակերպում է տնտեսական գործունեության տեսակների, պաշտոնների և զբաղմունքների դասակարգիչների հետ կապված գործառույթների իրականացումը,

13. կազմակերպում է գործարար և ներդրումային ոլորտներին առնչվող քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցությունը,

14. կազմակերպում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատման իրականացման աշխատանքները,

15. կազմակերպում է աշխատանքային օրենսդրության կատարելագործման ուղղությամբ աշխատանքները՝ ապահովելով գործատուների և աշխատողների շահերի հավասարակշռությունը,

16. կազմակերպում է սպառողների իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման մեխանիզմների մշակման աշխատանքները,

17. կազմակերպում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականության մշակման և դիտանցման աշխատանքները.

18. կազմակերպում է տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության մշակման, ինչպես նաև մրցակցության պաշտպանության ոլորտում Նախարարությանը վերապահված լիազորությունների իրականացման հետ կապված աշխատանքները՝ համագործակցելով ոլորտային շահագրգիռ մարմինների հետ,

19. կազմակերպում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի մշակումը, փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի նախապատրաստումը:

Իրավունքները՝

- համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ հիմնավորումները և փաստաթղթեր ՀՀ-ում գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակման և դիտանցման համար,

- Համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների բացահայտման և վերացման ուղղությամբ, ինչպես նաև ներդրումների ներգրավման, ներդրումների և ներդրողների պաշտպանության քաղաքականության մշակման, կորպորատիվ կառավարման, տնտեսական գործունեության տեսակների, պաշտոնների և զբաղմունքների դասակարգիչների, օտարերկրյա ներդրումներին առնչվող միջազգային համաձայնագրերի, ներդրումային ոլորտի ֆորումների, համաժողովների, խորհրդակցությունների, տնտեսական մրցակցության պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերի և դրանց նախագծերի հետ կապված համապատասխան անհրաժեշտ տեղեկատվություն,
- համապատասխան շահագրգիռ մարմիններից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ գործարար միջավայրի տարբեր ոլորտների ուսումնասիրության և առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ,
- Կազմակերպել քննարկումներ գործարարների հետ գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ,
- պետական և միջազգային կառույցների հետ, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել մասնագիտական քննարկումներ,
- Պահանջել և ստանալ գործարար և ներդրումային միջավայրին առնչվող «Թեժ գծի» միջոցով բարձրացված հարցերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն,
- համապատասխան մարմիններից պահանջել ներկայացնել ամբողջական տեղեկատվություն և նյութեր հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների վերաբերյալ,
- համապատասխան մարմիններից պահանջել ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ՝ հարկային և մաքսային, ոչ հարկային եկամուտների քաղաքականության օրենսդրական և վարչարարական ընթացակարգերի վերաբերյալ,
- համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ ծառայությունների առևտրի քաղաքականության մշակման, ծառայությունների շուկաների ազատականացման և ծառայությունների միասնական շուկայի ձևավորման վերաբերյալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ,
- պահանջել և ստանալ մասնագիտական կարծիքներ և անհրաժեշտ տեղեկատվություն նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ՝ գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատման իրականացնելու համար,
- համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ աշխատանքային օրենսդրության կատարելագործման ուղղությամբ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ՝ ապահովելով գործատուների և աշխատողների շահերի հավասարակշռությունը,

• համապատասխան մարմիններից պահանջել անհրաժեշտ հիմնավորումները և փաստաթղթեր ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման· միջոցների կիրառման քաղաքականության մշակման և դիտանցման վերաբերյալ

▪ պահանջել և ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ՀՀ-ում ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգերի մշակման և ներդնման համար

▪ համապատասխան շահագրգիռ մարմիններից ստանալ ամբողջական տեղեկատվական փաթեթ ներդրումային միջոցառումներին և համաժողովներին մասնակցելու համար:

• **Պարտականությունները՝**

• ուսումնասիրել գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակման և դիտանցման համար ստացված հիմավորումները և փաստաթղթերը.

• ուսումնասիրել գործարար և ներդրումային միջավայրի խոչընդոտների բացահայտման վերաբերյալ ստացված տեղեկատվությունը և ներկայացնել առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ.

• վերահսկել հետադարձ կապը գործարար համայնքի հետ և տալ ցուցումներ քննարկումների արդյունքում իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարությունների մասին.

• վերահսկել գործարար և ներդրումային միջավայրին առնչվող «Թեժ գծի» միջոցով բարձրացված հարցերի վերաբերյալ պատշաճ տրամադրումը.

▪ ուսումնասիրել հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը և նյութերը.

• վերահսկել հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքները.

• ուսումնասիրել մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության օրենսդրական և վարչարարական ընթացակարգերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը.

• վերանայել և մշակել ներդրումների ներգրավման, ներդրումների և ներդրողների պաշտպանության քաղաքականությունը և օրենսդրական դաշտը.

• ուսումնասիրել օտարերկրյա ներդրումներին առնչվող միջազգային համաձայնագրերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը.

• ծրագրել կորպորատիվ կառավարման իրավական դաշտը և կանոնները.

• մշակել ծառայությունների առևտրի քաղաքականությունը, ձևավորել ծառայությունների շուկաների ազատականացման և ծառայությունների միասնական շուկան ներկայացված առաջարկությունների հիման վրա,

• ամփոփել տնտեսական գործունեության տեսակների, պաշտոնների և զբաղմունքների դասակարգիչների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը.

• վերահսկել գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության

գնահատումն իրականացնելու հետ կապված աշխատանքները.

• հետևել աշխատանքային օրենսդրության կատարելագործման հետ կապված աշխատանքները՝ ապահովելով գործատուների և աշխատողների շահերի հավասարակշռությունը.

• մշակել և ներդնել սպառողների իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման մեխանիզմները,

• մշակել և դիտանցել ներքին շուկայի պաշտպանության և հակագնագոյացման միջոցների կիրառման քաղաքականությունը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար

իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն, և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: